ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5, Հեռ: (00 37410) 511-770, Ֆաքս: (00374 10) 511771

№ ԴԴ -1 [illegible]-8660

«26» սեպտեմբերի 2019թ.

«ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Գրիգորյան,

Հիմք ընդունելով Դատական դեպարտամենտի և «Դերձակ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքված թիվ ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/07 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) ամրագրված պայմանները, ինչպես նաև հաշվի առնելով, որ Ընկերության կողմից խախտվել են Պայմանագրի 2.4.1-րդ, 2.4.2-րդ, 2.4.5-րդ, 2.4.6-րդ, 2.4.9-րդ կետերով սահմանված պարտավորությունները և Ընկերությունը Դատական դեպարտամենտին Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո Դատական դեպարտամենտի կողմից լրացուցիչ տրամադրված ժամկետում չի մատակարարել Պայմանագրով որոշված քանակի ապրանքը, և ղեկավարվելով Պայմանագրի 2.1.1-րդ կետի, 2.1.3-րդ կետի «բ» ենթակետի, 2.1.7-րդ կետի, 2.1.7. կետի «բ» ենթակետի պահանջներով՝ տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտը՝

1. հրաժարվում է Ընկերության կողմից մատակարարված ապրանքից (197 լրակազմից) և դրա համար վճարելուց,
2. միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը,
3. ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ:

Միաժամանակ հիշեցվում է, որ Ընկերությունը պատասխանատվություն է կրում Պայմանագրի 6-րդ կետով ամրագրված պայմաններին համապատասխան:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ՓՈԼԱԴՅԱՆ